ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/46

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2021 թ. N 46

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Ստեփանավանի պրոֆեսոր Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Երիտասարդական 47

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 24.12.20թ.-ի Հանձնաժողովի նիստում քննարկեց Ստեփանավանի պրոֆեսոր Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	28 փետրվարի 2018
ինքնավերլուծության ներկայացում	3 հուլիսի 2018
փորձագիտական այցի իրականացում	14-16 հունվարի 2020
փորձագիտական զեկույցի ներկայացում	24 հունվարի 2020
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	27 փետրվարի 2020

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 5-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ստեփանավանի պրոֆեսոր Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են:**

Քոլեջի բոլոր ՄԿԾ-ները մշակվել են լիազոր մարմնի կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչների հիման վրա, որոնք համապատասխանում են ՀՀ ՈԱԾ-ին: ՄՈՒՀ-ում իրականացվող ոչ բոլոր ՄԿԾ-ներն են ուղղակիորեն հարում քոլեջի գյուղատնտեսական ուղղվածությանը: Մարզի աշխատաշուկայի կարիքների համապարփակ վերլուծություններ քոլեջը դեռևս չի իրականացրել, այնուամենայնիվ քոլեջ-գործատու սերտ երկխոսության շնորհիվ կրթական ծրագրերը հնարավորինս համապատասխանեցվել են աշխատաշուկայի կարիքներին: Մոդուլային ուսումնական ծրագրերում նշված ակնկալվող արդյունքներում հաճախ գերակշռում են տեսական գիտելիքները, քան հմտություններն ու կարողությունները: Քոլեջը փորձեր է անում ներգրավել արտադրական փորձառություն ունեցող գործատու դասախոսների, որոնք նպաստում են պրակտիկ հմտությունների ձևավորմանը:

ՄՈՒՀ-ում թեև մշակված է «Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդիականացման քաղաքականություն», սակայն դասավանդման և ուսումնառության մեթոդները ոչ միշտ են փոխկապակցված պետական կրթական չափորոշիչներում սահմանված ակնկալող արդյունքներին: Քոլեջն ունի ուսանողների գիտելիքների գնահատման կարգ, սակայն դասախոսներից շատերը տեղյակ չեն դրանից, սահմանված չեն ամփոփիչ ատեստավորման քննության գնահատման համար հստակ չափանիշներ: Ընդհանուր առմամբ դասախոսական կազմն ունի վերջնարդյունքներին

համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության խնդիր, ինչը կարող է խոչընդոտել ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը:
Քոլեջն ունի ՊԴ կազմի կայունության ապահովման և երիտասարդացման կարիք:
Քոլեջի նյութատեխնիկական հագեցվածությունը շատ թույլ է, լսարանային և լաբորատոր ֆոնդը հնամաշ է և մեծ խոչընդոտ է մասնագետների պատրաստման հարցում:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջն ունի առանձնահատուկ դերակատարում տարածաշրջանում և ծավալած գործունեությունը հիմնականում համահունչ է առաքելությանը: Այն ունի սահմանված ռազմավարություն և ռազմավարական խնդիրներ, սակայն արդյունքահեն կառավարման և ռազմավարական խնդիրների իրականացման, արդյունավետության գնահատման փորձառություն քոլեջը դեռևս չունի:
Քոլեջում կառավարումը հիմնականում իրավիճակային է. տվյալների հավաքագրման մեխանիզմներ կան, սակայն դրանց արդյունքները չեն կիրառվում նպատակային և չեն հանդիսանում աշխատանքների պլանավորման, ռազմավարական ծրագրերի մշակման կամ վերանայման հիմք: Տեղեկատվության հավաքագրման գործընթացները հիմնականում կրում են իրավիճակային բնույթ և կանոնակարգված չեն նախապես մշակված ընթացակարգերով: Որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը***

ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում չի սահմանել հետազոտական/ստեղծագործական ոլորտին և արտաքին կապերին վերաբերող որևէ նպատակ,: Քոլեջը չունի հետազոտական/ստեղծագործական գործունեության իրականացման և զարգացման քաղաքականություն, մեխանիզմներ և ընթացակարգեր: Քոլեջը որպես հետազոտական գործունեության և կրթական գործընթացի փոխկապակցվածության մեխանիզմ դիտարկում է ուսանողներին տրվող անհատական աշխատանքները, ռեֆերատները, գործնական առաջադրանքները, սակայն դրանցում հետազոտական բաղադրիչը շատ թույլ է արտահայտված:
Դասախոսներն իրենց դասավանդած մոդուլների շրջանակներում չեն իրականացնում հետազոտություններ, ինչը կարող է հանգեցնել առկա կադրերի մասնագիտական և մանկավարժական կարողությունների արդիականության կորստին և լճացմանը: ՄՈՒՀ-ում հետազոտական/ստեղծագործական գործունեություն ծավալելու համար բացակայում են համապատասխան ֆինանսական և լաբորատոր ռեսուրսները:
Քոլեջը չունի նաև արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև այդ ոլորտի կանոնակարգմամբ զբաղվող ենթակառուցվածք: Այնուամենայնիվ, քոլեջն ակտիվորեն համագործակցում է որոշ տեղական կազմակերպությունների և սակավաթիվ միջազգային կազմակերպությունների հետ, որոնց հետ կապերի հաստատմամբ զբաղվում է Կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնը:
Գործատուների հետ կապը հնարավորություն է ստեղծում գործատուների մոտ պրակտիկաների անցկացման, ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորման, աշխատաշուկայի արդի

պահանջների վերաբերյալ քննարկումների կազմակերպման և կրթական ծրագրերի բարելավման համար:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագրի մեծ մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Ծրագրով սահմանված արդյունքների ձեռքբերումը կարող է նպաստել քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրների լուծմանը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ստեփանավանի պրոֆեսոր Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - ՌԾ նպատակների իրականացման համար հստակ ժամանակացույց և արդյունքների ձեռքբերման գնահատման չափելի առանցքային ցուցիչներ ունենալու պահանջը,
   - երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ փոխկապակցված պլանավորման անհրաժեշտությունը,
   - հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրությունների հստակեցման անհրաժեշտությունը, կարևորելով տարածաշրջանի կարիքները և հետազոտության արդյունքների հնարավոր ապրանքայնացումը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - բոլոր կրթական ծրագրերը քոլեջի ուղղվածությանը համապատասխանեցմանը,
   - շրջանավարտների և գործատուների հետ կանոնակարգված և կայուն կապերի հաստատմանը,
   - դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացմանը,
   - ուսանողների և դասախոսների շրջանում ուսանողակենտրոն ուսուցման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին

5. համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ
2021 թ. մայիսի 17
ք.Երևան

Ա. Սաղյան